



ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ

Երևան նահանգի Աշտարակ գիւղում ծնունդ առաւ մեր քնարերգակ բանաստեղծը : Հայրը՝ Տէր Սիմոն քահանայն մի առանձին ազգեցութիւն չունեցաւ նրա մանկական սրտին ու մաքին , որովհետեւ վախճանուեց 1847 թուի խօլերային համաճարակի ժամանակամիջոցին , երբ Սմբատը վեց տարեկան չը կար : Աւելի մեծ եւ բարերար ազգեցութիւն ունեցաւ մայրը՝ Խոսրովիգուխաբ , որն ամբողջ գիւղում յայտնի էր իբրև առաջին գեղեցկուհի , խելացի ու համեստ բնաւորութեամբ : Երկու սիրուն եւ զգայուն ոտանաւոր՝ « Երագ » եւ « Վերջին հրաժեշտ »ը , որ նուիրուած են մօրը , արդէն պարզ ցոյց են տալիս թէ ո՞ր աստիճանի մայրական զարգացրած քնքոյշ զգայմունքների ու զեղմունքների խոր , անջընջելի ապաւորութեան տակ է եղել բանաստեղծը եւ թէ ի՞նչպիսի կարօտագին սենչանքներ են յուզել , ուրորել սիրտը , քսան տարի քայակայելով հայրենի գիւղից օտարութեան մէջ , զէպի մայրական անկեղծ գորովանքը , ժպիտը , համբոյրները եւ այն ամենը առ հասարակ , ինչ

որ ստացել է նրանից, ջամբած անարատ կաթի հետ միասին, օրօրոցի հասակից ակսած Մայրական գիրկը ո՞ր բանաստեղծի համար խորին ըզ-
 փացմունքի աղբիւր չէ եղել եւ վառ յիշողութիւններ չէ զարթացրել,
 նա անմոռանալի եւ ամենից թանգն է: Հայրենի գիւղն էլ իր եւ իր շրջա-
 կայքի բնութեան դեղանկար տեսարաններով, մի կողմից Մասիսը, միւս
 կողմից Արագածը ձիւնափայլ գագաթներով նոյնպէս լաւ տպաւորութիւն
 են թողել քանաստեղծի մերեւակայութեան, եւ յիշողութեան վրայ: Եւ
 դրա համար նա շատ անգամ է երգել այդ մասին իր բանաստեղծութիւն-
 ներում:

Տասներկու տարեկան հասակում թողնում է ծննդավայր Աշտարակը
 եւ գնում Մոսկուա, որը նրա երկրորդ հայրենիք գարծաւ 1852-ից մինչեւ
 1890 թուականի վերջերը, ուր սկզբից մանկելով Լազարեան ճեմարանը՝
 10 տարուայ մէջ աւարտած է դառնթացքը, մնալով վերակայու եւ Հա-
 յոց լեզուի աստեղիչ պատարաստական դասարանում, իսկ Մսեր մագիստ-
 րոսի մահից յետոյ շարունակում է նոյն լեզուի եւ գրականութեան պա-
 սառնութեան պաշտօնավարութիւնը քարձք դասարաններում մինչեւ
 1897 թ: Նա միայն Մոսկուայից կարողացաւ 1873-ին մի փոքրիկ ճանա-
 պարհորդութիւն կատարել յէպի ծննդավայր գիւղը՝ գիտաւորապէս մօրը
 կարօտած, որի մանկարար ինամբի եւ գործախնայի տակ ստացել էր մի
 զգայուն սիրտ, այնքան պաշտելի:

Բանաստեղծական բնատուր ձեւքը եւ շնորհքը շատ վաղ սկսուեց
 նրա մէջ: Դեռ զարոյցական նստարանից նա գրում, շարադրում էր ոտա-
 նաւորներ, որոնք 1859-ին հրատարակուեցին « Ծոպաղ »-ի մէջ: Բայց
 նա շուտով ազատուեց թէ՛ « Ծոպաղ »-ից եւ թէ՛ գրաբարանով ոտանա-
 ւորներ գրելու մեղքից(1): Արդէն աշակերտական օրերից նա կարգում,
 ժանոթանում էր եւրոպական գրականութեան, եւ այնքան խոր տպաու-
 րութեամբ իր տաղանդի զարգացման, տը Շէքսպիրի, Պուշկինի, Գէ-
 թէի, մանաւանդ անգլիացի բանաստեղծ լորդ Բայրօնի մաքի ազդեցու-
 թեան հետքերն աւ նշույները շատ տեղ երեւան են պալիս նրա ոտանա-
 ւորների տողերում:

1807-ին Բայրօնը լոյս ընծայեց մի հատորիկ բանաստեղծութիւն-
 ների « Ազատութեան մասեր »: 53 տարուց յետոյ, 1860-ին, Ս. Շահա-
 ղիզն էլ նոյն խորագրով հրատարակեց Մոսկուայում հայերէն բանաստեղ-
 ծութիւններէ մի գրքոյկ, որը գպրոցում հարգացած կլասիքական հե-
 ղինակներից թարգմանութիւններ եւ նմանողութիւններ են, մանաւանդ
 Բայրօնի պօէզիայի ներշնչման տակ՝ նման զգացումների արտայայտու-

(1) Սկզբում նոյն մեղքի մէջն էր թաթախուած եւ Գամառ-Քաթի-
 պան իր հայր Գաբրիէլ Պատկանեանի խմբագրութեամբ լոյս տեսող
 թերթի մէջ:

թեամբ քաղցրաճնչին մեղեդիներ ու երգեր, սիրոյ եւ հայրենիքի մասին : Դա մի նախերգանք է, մի պատանեկան անդրանիկ փորձ, որը թէեւ հասարակութեան ճաշակին հաճելի չեղաւ : Բայց նրանցում բուրում էին պայծառ նշոյլներ թագնուած սաղանդի՝ ապագայում նպատակին հասնելու :

Մեր ազդեցիկ մտածութեան պատմութեան մէջ մտաւոր եւ բարոյական ժառանգութեան մի նշանաւոր դարագլուխ կազմող այն ուսանելի եւ յիշատակելի ժամանակաշրջանին, երբ դարաւոր անշարժ քնի օրրանքներէջ նոր էր հայ հասարակութիւնը զարթնում եւ մտքի ազատութեան յեղափոխութեամբ ձգտում զէպի լուսաւորութեան նոյնիրական գործը, երբ Ս. Նազարեանի, Մ. Նալբանդեանի եւ Ռ. Պատկանեանի քաղաքացիական եռանդով նոր էր հորիզոնում վերածնութեան պայծառ արշալոյսը շողջողում, երբ գրաբարի ղէմ՝ իբրեւ՝ հատու՛ն ժամանակի պահանջողութեամբ՝ զարգացման կենդանի ղեկավար գործադրութիւն էր պահանջում ժողովրդի ընդհանուրին հասկանալի եւ դիւրըմբռնելի աշխարհիկ լեզուի քաղաքացիութիւնը, երբ գրականութեան եւ հրապարակախօսութեան մէջ ձգտումները, հակումները եւ իդէալները զանազան գոյն ու կերպարանք ներկայացնող հակատրամադիր իրարանցումը, շփոթը, աշխարհաստեղծութիւնը եւ ուղղութեան ոգու զաւանանքները հին եւ նոր պատերազմող պայքարները դեռ չէին վերջացրել իրենց հաշիւները, ա՜ն՝ այդ նշանակելի պատմական ժամանակ դրական ասպարէզ է դուրս գալիս Ս. Շահազիզը « Հիւսիսափայլ »-ի էջերում :

Գրական երևոյթիւթիւթները ուսումնասիրութեան հետեւող ամեն մի բարեխիղճ հայ մարդ անշուշտ կը խոստովանի, որ « Հիւսիսափայլ »-ի կատարած դերը անագին է եւ ազատամիտ մտրակողական ուղղութեան մէջ առաջնութեան ոյատուի մեծաբեւոյ իրաւունքը նրան է արժանի : Այդ ամագրի մէջ կռել-կռփեցին իրենց անդրանիկ հիմնական անյողողոյց ոյժերը Ս. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Սորէն Ստեփանէ, Վերովըլ Պատկանեան, Դէորդ Բարխուղարեան, Յովհ. Քոչուրէզեան, Երևմիա Սահակեան, Սիմոն Ֆելէկեան եւ ուրիշ լուսագոյն գրիչները : Այնու՛ղ առաջին անգամ հնչեցրից Բաֆֆին Աղթամարայ կըղզուց « Չայն տուր, ո՛վ ծովակ » որը այժմ սիրելի երգ է դարձած ժողովրդական : Այնու՛ղ յայտնի դարձաւ ընթերցող հասարակութեան սուս բանաստեղծ Լեւոնտովի « Դեւ » հրաշակերտ պոէմը՝ թարգմանութեամբ Լճանուկ Սաղաթեանի, որի մէջ այդ վաղամտելի երիտասարդը ցոյց էր տալիս լաւ բանաստեղծական շնորհք :

« Աղատութեան ժամեր » առաջին փորձից յետոյ, վերջապէս 1861-ին, դեռ ուսումը ճեմարանումը չաւարտած, Շահազիզը ծանօթանում է 60-ական թուականները մտքի լուսագոյն գործող ներկայացուցիչները հետ եւ նրանց շարքում տպագրութեան է սկսում հեղհեաէ իր

ստանաւորները « Հիւսիսափայլ »-ի մէջ : « Հիւսիսափայլ »-ը եղաւ նրա մտքի լապտերը եւ խթանը բանաստեղծական հռչակի տարածման : « Նա սնուեց, մեծացաւ « Հիւսիսափայլ »-ի անմիջական դպրոցի ազդեցութեան տակ՝ (1) լինելով այդ թերթի տաղանդաւոր աշխատակիցներից մէկը, խմբագիր Ս. Նազարեանի ամենամօտ մտերիմ բարեկամը եւ մինչեւ վերջը երկրպագու եւ պաշտպան նրա դաւանած « լուսամիտ-մարտնչող » գաղափարներին ու սկզբունքներին Այնքան էին մտեցել եւ մտերմացել միմեանց, որ երբ Ս. Նազարեանը մահուան անկողնում տառապելիս է եղել, դառնում է երիտասարդ ընկեր Ս. Շահազիզին այս անմոռանալի խօսքերով . « Այո՛, ինձ մնում է մեռանել, կարծո՞ւմ ես դու՝ որ ես մահօք երկիւղ ունիմ . ո՛չ, իմ ազնիւ ընկեր, դա մի բնական հարկաւորութիւն է : Բայց այն սիրելութեան կապերը, որ կապում էին միմեանց հեռերից սիրող սրտեր, այն քնքոյշ յարակցութիւնները, որ կացին երկու անձնանուէր բարեկամների մէջ, եթէ իմանայիր որքան գառնութիւն եմ զգում, երբ մտածում եմ, որ այդ կապերը, այդ յարակցութիւնները պիտի քայքայուէին » : Իսկ Ս. Շահազիզը իր սիրելի ուսուցչի եւ մտերիմ ընկերոջ մահից յետ՝ « օրհնեալ մարդու յիշատակին » նուիրում է հետեւեալ ազդու ոտանաւորը, որ ներշնչուած է երկուսւմ Հորացիոսի ոճով .

Անձեռագործ գու մահարձան քեզ կանգնեցիր ,
 Ո՛չ հողանիւթ , որպէս երկաթ կամ որձաքար .
 Հրգօր գրչով , սուրբ վաստակով ու անձանձիր ,
 Շունջ կենդանի եւ յետ մահուան հանդիսացար :
 Ահա նոր Ազգ եւ նոր Լեզուդ իւր ձիթնին ,
 Քո ջրով բուսած , քե՛զ է բերում . ո՛վ Ստեփանոս ,
 Խաղաղ միտ՛ , մի՛ վրդովուիր , քոնն է դափնին ,
 Խաւարի մէջ լոյս մեզ ծագող Պոսմէթեոս :
 Աշխարհ ծնար եւ աշխարհիս գարձար մշակ ,
 Բայց չտեսար այս աշխարհից անդորրութիւն -
 Աշխատաւոր մարդկան բաժին է փշեայ պսակ :
 Ա՛հ , քրտնաջան ոսկրների՛դ իսղաղութիւն :

Ըստ արժանւոյն համակիր երախտադիտութեան զդասցումը աւելի արտայայտուեց 1881-ին « Հրապարակախօս ծայն » կէս-քննադատական եւ կէս-ընդդիմախօսական աշխատութեան մէջ , որով կառւի ապարկւղ նեւտուեց Շահազիզը Այ. Ներիցեանի մի խիստ , բայց տևող անդ անարդար , ծայրահեղութեան հասցրած քննութեան դէմ՝ քաջաբար եւ անկեղծօրէն պաշտպանելով Ս. Նազարեանի օգտակար անձնաւորութիւնը եւ նրա օր

(1) Շատ գեղեցիկ առղեր է նուիրել Շահազիզին պ. Լէօ Վեհեակի Գեղունու մէջ :

դան « Հիւսիսափայլ »-ի էական արժանատորութիւնները ազատամտութեան դժուարին հարթած չաւղում : Շահագիզի արդարացի բողոքին եւս արձագանգ տուաւ Գրիգոր Արծրունին « Մշակ »-ում , քննադատութեան ենթարկելով նոյնպէս Ս. Նազարեանի գրական գործունէութիւնը եւ « Հրապարակախօս ձայն »-ի համար վկայում էր եւս թէ « կարգացում է յափշտակութեամբ » : Ընդ տ որ նրանում զանում ենք կտրուկ եւ կորովի ոճ , համոզիչ դարձուածքներ , միայն նա էլ տեղ տեղ Երեցեանի պէս միակողմանի չափազանցութեան մէջ էր բնկել :

Պէտք է չը մոռանալ , որ պ. Շահագիզը ոչ միայն բանաստեղծական , այլ եւ՝ ուսուցչական , մանկավարժական ասպարիզում նշանաւոր դեր է խաղացել : Նրա աշակերտները համեստ երախտագիտական պարտականութիւն համարելով՝ 1892-ի ապրիլի 9-ին զնահատեցին նրա 30-ամեայ գործունէութիւնը շքեղ հանդիսով մի կատարած ազգային սօնախըմբուցութեամբ , որին մասնակցեցին շնորհաւորութիւններով երկրի զանազան տեղերից նշանաւոր մարդիկ , գրողներ եւ խմբագիրներ : Տպուեցին եւ բաւական յօրուածներ թէ՛ կենսագրական եւ թէ՛ յօբելեանի մասնրամասնութիւնների մասին : Մի տարի այդ հանդիսից յետոյ ինքը Շահագիզը իր ստացած տպաւորութիւնները հրատարակեց « Յօբելեանի տարեգարձ » շքեղատիպ դրքի մէջ , ուր երկար լուծ քնարի մի յանի թրթռումներ հնչեցրեց հ'ւ մի քանի ոտանաւորներով , որ իր բանաստեղծական փառքի վրայ նոր բան չաւելացրեց եւ միայն 1890-ին նորից յիշելով քնարը , կարծես ցոյց տալ ուզեց իր հրատարականը Պառնասի մուզային « լինել մշակ հասարակաց պիտոյքի » ուխտած նշանաբան գաղափարից .

Մեռաւ իմ մուզան , հանգաւ եւ կրակ ,
Անտառը լցուեց չոր տերեւներով ,
Երկինքը ծածկուեց , փախաւ արեգակ ,
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով .
Ե՛ւ աստեղազարդ բոլորակ գմբէթ
Ե՛ւ արծաթափայլ ջրերի խոխոչին
Այլ եւս չէ խօսում բանաստեղծի հետ ,
Եւ ոչ այցելում աւերած իմ տուն :
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ ,
Մայր մտաւ ահա եւ նշոյլ վերջին , —
Հանում եմ զրահս ե՛ւ զէն ե՛ւ զարդեր ,
Յանձնում եմ դրանց մանուկ սերնդին :

Ռուսահայոց մտաւոր վերածնութեան կարապետող գործում գուցէ ոչ մի գրական-բանաստեղծական արժէք չը ներկայացնէր Շահագիզը , եթէ չտնեհար գրած « Լեւոնի վիշտը » եւ մուտք գործած չը լինէր իւրեւ աշխատակից « Հիւսիսափայլ »-ում : Այո՛ , « Լեւոնի վիշտը » թէ

առաջ եւ թէ հիմայ մեր հայկական միակ պօէման է . որի շնորհիւ պ. Շահազիզը բանաստեղծութիւնը հասցրեց երաժշտական նրբին բարձր կատարելութեան Միայն վերջին ժամանակներս լոյս սեւած մեր նորագոյն երիտասարդ բանաստեղծների գրչի տակից մի քանի հետաքրքրական եւ ուշադրութեան արժանի պօէմներ , բայց բոլորովին ուրիշ ձևերի եւ գոյների արտայայտման առանձնայատկութիւններով : Միմիայն « Լեւոնի վիշտը » պօէմի շնորհիւ է Շահազիզը ֆաղսֆոցի-քանասեղծ ճանաչուած եւ շատերն են այդ պօէմի քննադատութեամբ պարսպել — Մշակ, 1881 թ. 89. Արարատ, 1893 թ. 5. Մուրճ, 1897 թ. 7-8. Արձագանք, 1897 թ. 86. Մուրճ, 1901 թ. 1. Մուրճ 1891-1892 Նշիչէ Մաղաթեան , Մուրճ, 1898, 4. Կուսիկեան, Վ. Փափազեանի ժողովածու ՎՏակ, 1901, էջ 334 Մինաս Բերբերեան, նոյնը արտասպած առանձին գրքոյկով, Լէօ « Ստեփանոս Նազարեան » կենսագրականում եւ Գեղունի « Թուսահայ գրականութիւնը » , Իսկ Ա. Մատուրեանը 1897 թուին , երբ Ս. Շահազիզը Լազարեան ճեմարանից իր հրաժարական ողջոյնը սուսա , նրա 35 տարուայ վաստակը ներքողութեան արժանացրեց « Երեսունուհինգ տարի » առնուով մի գրքոյկով : Եւ նրա յօրելեանի առիթով նոյն երիտասարդ բանաստեղծը երեք շա՛ս սիրուն ոտանաւոր է նուիրել իր բանաստեղծութիւնների I եւ II հատորներում : Ահա թէ նա ի՞նչպէս է գրուատում պատկառելի բանաստեղծին , առաջ բերենք իւրաքանչիւրից մի քանի տուն :

- . . . Բայց ոչ . . . ո՛վ ազգիս քաղցրախօս երգիչ ,
- Դու մի պարզ էակ ծնար այս աշխարհ .
- Դու ծնար պօէտ — սիրոյ քարոզիչ .
- Դու ծնար ազգիդ անկեղծ սիրահար .
- Եւ հնչեց քընարդ ազօտ , համարձակ ,
- Նա ոգեւորեց մեր սիրան ու հոգին .
- Եւ ահա՛ այսօր յարատեւ քեզ կեանք
- Բարեմաղթում է քո ազգի որդին :

(I հատոր, էջ 38. «Բանաստեղծ Սմբատ Շահազիզեանին» յօրելեանի առիթով)

Դա՛նն է մեր կեանքը , ախ՛ուր մեր օրեր , (1)
 Չը կայ մեզ հանգիստ , չը կայ խնդութիւն .
 Միայն տառապանք եւ անվերջ վշտեր
 Մեր հէգ սրտերից քամում են արիւն . . .
 Նայում ենք վերեւ — ամպամած երկինք ,

(1) Այս զոդարիկ ոտանաւորը ամբողջութեամբ սպուած է իմ խրմբագրած նորագոյն բանաստեղծութիւնների « Չղայմունք » ժողովածուի մէջ :

Նայում ենք ներքեւ — շիրիմ ոտքի տակ ,
 Նայում ենք մեր շուրջ — անեղ փոթորիկ ,
 Իսկ մեր ձեռքերին — շղթայ ու կապանք . . .
 Եւ որպէս խաւար , մռայլուած գիշեր ,
 Անզօր ողբում են մեր սիրտն ու հոգին ,
 Եւ քանի՛ ըզձեր , քանի՛ խորհուրդներ
 Ճնշուած նիրհում են մեր կրծքի տակին . . .
 . . . Երգի՛ր մեզ անահ , կորովի ձայնով
 Փառք եւ յաղթանակ փայլուն գործերի .
 Երգի՛ր , որ ազատ քնարիդ լարերով
 Ճնցես թեւերը թըմրած սրտերի . . .
 . . . Երգի՛ր , թո՛ղ քո երգն անկեղծ , ոգելից ,
 Որպէս ջերմ աղօթք հայրենասէրի .
 Ճըրուէ մռայլը վըհատ սրտերից ,
 Բանայ մեզ աղբիւր ոսկի յոյսերի . . .
 . . . Դա՛ռն է մեր կեանք , տխուր մեր օրեր ,
 Մեզ կաշկանդել է բռնութեան շղթան .
 Օ՛ր , երգի՛չ , երգի՛ր մեզ հըզօր երգեր ,
 Բոցավա՛ռ երգեր ոգեւորութեան . . .

(II հատոր , էջ 22 եւ 23, « Հայ երգչին » . կարդացուած է յօրել-
 եանի ժամանակ)

Փա՛ռք եւ երանի՛
 Բեզ քաջ սերմնացան ,
 Որ դաշտն հայրենի
 Չես թողնում խոպան ,
 Որ ջերմ յոյսերով
 Դեռ նրա գրկում
 Ապրում ես սիրով
 Եւ սիրով տանջվում . . .

(II հատոր , էջ 27 « Սերմնացան »)

Այս մէջէմէջ բերուած կտորներէից կարելի է պարզ եզրակացնել թէ
 Շահագրի մտերիմ բարեկամը՝ պ. Մատուրեանը(1) ի՛նչպէս խոր եւ լա-
 է ըմբռնել « Լեւոնի վիշտը » հեղինակին եւ թէ ինչպիսի շնորհալի ըզ-
 գացմունքներ է նուիրում, ըստ արժանւոյն գնահատելով ու բնորոշելով
 « Հայ երգչի » եւ « Սերմնացանի » քնարերգութեան ոգեւորութիւնը
 « Հային պատրաստելու նոր կեանքի համար » :

(1) Այս շնորհալի բանաստեղծի մասին եւ արդէն խօսել եմ Վենե-
 տկի « Գեղունի » հանդիսի մէջ (1902, N 3) . կը խօսեմ եւ « Բանասէ-
 րում » միւս նորագոյն բանաստեղծների շարքում աւելի մանրամասնօրէն :

Մտքատ Շահաղիզի վերջին ժամանակների աշխատութիւններն են « Ամառնային նամակներ » 1897-ին , ուր մեծ պաշապանութիւն է ցոյց տալիս մեր պատմահայր Մովսէս Խորենացուն եւ ընդհանրապէս բանասիրական նիւթեր են պարունակուում հայկական լեզուի հանգամանքների , պատմութեան եւ կրօնի մասին : Աշխոյժ ոճով գերակշիռ տեղ է տալիս ազգայնաբան գաղափարական ուղղութեան հոտանքներին եւ նրանց առաջացրած բարիքներին :

« Յիշողութիւններ Վարդանանց ասոնի ասիթով » 1901-ին, որ նըմանվում է ճառարտական գրուածքի , վերցրած 5-րդ դարու պատկերներէց , յարակցելով եւ ժամանակակից ներկան իր դոյների լուսարանութեամբ :

« Մի քանի խօսք իմ ընթերցողներին » մի հրատարակատուութիւն է , մի ընդարձակ առաջնորդող յօդուած , որով ուզում է քննել լուսարանելով ազգի գոյութեան խնդիրը , թէ « Ասեցէք , ի՞նչ անենք , որ փոքր ազգերը չը հալուին ժամանակի լայնափոր եւ լայնաբերան քուրայի մէջ » (էջ 22) : Եւ կարծես պատասխան իրեն զբաղեցրած եւ առնջած հարց առաջարկութեան՝ ասում է . « Արթուն կացէք , ուր չը կայ լեզու եւ գրականութիւն , մտած կեանքի յարութիւն էլ չի կարող լինել » (էջ 63) : Նա շատ թռուցիկ է անցնում բուն խնդրի ուսումնասիրութեան բայց եւ իրեն յատուկ ախորժելի ոճով շատ համակրելի կարծիքներ է յայտնում ազատամտական տեսութեան եւ կրօնի խնդիրը որոշելու մէջ . « Գերակշիռը ազգութեան կողմն է եւ ոչ կրօնի , այսինքն բոլոր Հայերը առաջ պէտք է պաշտեն իրենց հայրութիւնը եւ յետոյ դաւանութիւնը : Այս պատճառով եթէ այդ դաւանութիւնը իմ ուղղութեանը կաշառէր ու հեռացնէր իմ լեզուից , ապա ես պատրաստ էի հրաժարուել նրա բոլոր խոստացած երանութիւններից » (էջ 42) : Իսկ գրողներին Շահաղիզը գեղեցիկ կերպով խրատ է կարդում : « Ամեն շարագրութիւն պէտք է ներկայացնէ մի աւարտած շինուած , որի մասերը պիտի ունենան ներդաշնակ առընչութիւն գէպի ամբողջը , իսկ լեզուն , որ լաւ գրութեան գլխաւոր պայմաններից մինն է , պիտի բարեխղճութեամբ մշակել , քերել , տաշել եւ հասցնել ազնիւ քարի գեղեցիկութեան : Սրա համար հարկաւոր չէ շտապել , ինչպէս « ով շուա , նա կուշա » , որ այս դէպքում միշտ քաղցած կը մնայ . հարկաւոր չէ մի քանի սողեր շանգուկ թղթի վրայ եւ յանձնել տպարանին կիսատ դործը , պիտի երկար ու բարակ մշակել , մի անգամ գրածը մի քանի անգամ ջնջել եւ նորից գրել (էջ 55) , այնպէս որ « կրիտիկոսը » անաչառ քննելով այն , բոլոր մասերով անխոցելի դանի եւ ոչ թէ ընկուզի պէս ջարդի եւ ողջ տեղ չը թողնի նրա մէջ » (1) (էջ 56) , իսկ « Լեւոնի վիշաբ » նա հրատարակեց Մոսկուա-

(1) Լաւ կանէին , եթէ մի կարգի գրողներ « ականջի օղ » շինէնի քանաստեղծի այս խրատը , այս զգուշացնող դասը :

յում 1905 թուին ձիւն է. Եղիանկը և ժամանակակից զեյթ : անու-
նում իր այդ պոէմին , որովհետև նրանում ժամանակակից կեանքն է
արտացոլում. ժամանակակից շօշափած հասարակական իրական պահանջ-
ներն ու խնդիրներն է երգում. գինուորում հնամուտ թեան եւ յա-
ռաջգիտութեան կաշկանդող խաւարի գէմ : Պոէմը նուիրած է Լազարեան
ճեմարանի 50-ամեակին : Բամանում է շոր գլխի . իրաքանչիւրը 150
տնից աւելի սասնուարների պարունակութեամբ Տեղ-անդ ազատ յան-
գուար եւ վանկական սողերը անհող վերաբերութեամբ՝ կազմում են սա-
ղաչափական կանանների ու պահանջների գէմ : Յասաղարան մի սասնու-
ար նախերգանքում նա քաղաքացիական անդամ քաջ պաշտպանում է
աշխարհարար լիզուին , որի պայծառացման եւ զարգացման գործում Ս.
Նազարեանի , Մ. Նայրանդեանի . Ռ. Պապանի , Խ. Արովեանի ու զղա-
թեամբ մեծ ներդարութիւն է ունեցել եւ Ս. Շահադիզը : նա մարտն-
չում , հարուածում է հակասակորդներին եւ սղջախական ձօն է կարգում
գրչին եւ սեզանին : Ամեն գլխի սկզբներում եւ վերջերում նա իր անձ
նական զգացմունքներն ու խորհրդանութիւններն է անում :

« Բանասէր »-ի 1903 թ. երկու համարում « Իւրիյ Վեսելովսկի »
կենսագրականում եւ խոստացայ սալ ընթերցողներին « Լեւոնի վիշաբ »
պոէմի բովանդակութիւնը եւ նայ կեանքի ու գրական երեսյթների բա-
րեխիզն ու սոսնձասիրութեան գործով ազդարւած սուս յարգելի երիտա-
սարգ մասնագրի արտայայտած կարծիքները այդ պոէմի մասին : Խոս-
տուճա ու շացա . որովհետև խմբողի Կ. Յ. Բամաջեանի բացակայու-
թեամբ՝ (Ունի սոսնձական ուղեւորութեան պատճառով) ամսամանակ
ընդհատուեց « Բանասէր »-ը . բայց այժմ վերականգնող՝ կատարում եմ
խոստուճա :

Ս. Շահադիզին նուիրած 1902 թուին Վեսելովսկու գիրքը բազկա-
ցած է 103 էջերից եւ զարդարւած է բանաստեղծի պատկերով : Առաջին
56 էջերում նա ծանոթացնում է սուս ընթերցողներին Ս. Շահադիզի
բանաստեղծական եւ հրատարակախոսական գործունէութեան հետ : Այդ
տեղ ցոյց է աւելի Ռուսաց մասնագրութեան զգալի ազդեցութիւնը նայ
բանաստեղծի վրայ . մանաւանդ Ռայքոնի . Պուշկինի , Լերմոնտովի եւ
Հայնէի : նախկին կրկնութիւնները նորանոր լուսարանութիւններով
հանդէտ է բերում Հայց հին եւ նոր մասնագիրների ու բանաստեղծների
մասին : Ընդհանրապէս Վեսելովսկին քննութեան է ենթարկում « Լեւոնի
վիշաբ » , առանց դուրս գալու նրա շրջանակից . հէնց քննութեան նիւթ
դարձնելու նպատակով գրքի երկրորդ մասում (վերջում) զեականում են
մի քանի չափածոյ սասնուարների ստերէն թարգմանութիւնները(1) , որոնք
կատարւած են խնամքով ու զեղեցիկ յաջողութեամբ :

(1) Թւով 24 . Թարգմանութիւններն են՝ Վեսելովսկի . Լէվ Ու-
մանէց , Ս. Գուլովաշկովսկի . Իւ. Վիսյուկ եւ Տ. Գ. Մանասանդ յաջող
digitised by A.R.A.R.®

Վեսելովսկին մի առ մի մատնանիչ է անուամ Շահազիզի ճոխ , պե-
րանոյշ լեզուն , դողարիկ դարձուածքները , ազատամիտ գաղափարների
չնչով ստացած ազգային բարեկիրթ դաստիարակութիւնը , ցոյց է ապրիտ ,
որ երիտասարդ թարմ մաքրի քարոզիչն է Ս. Շահազիզ պոէմում , ու
նա մտրակում է հին ու փթած յետադիմութիւնը , ազգազաւութիւնը ,
կեղծիքը , ուր երգում է ազգի « չարին ու բարին » , սէրը , վիշտը ,
տանջանքը , ձգտումը , կարիքը , պահանջները , թերութիւնները եւ այլն :
Ա.Մին մի տողի մէջ արդար բողոքի ձայն է լսվում եւ հրաւիրական կոչ
« Յառա՛ջ ազգութիւն » : Այդ բոլորը պ. Վեսելովսկին ի մի է ամփոփում
բանաստեղծի ուղղութիւնը եւ արժանիքը իտէալական , գեղարուեստա-
կան եւ փիլիսոփայական տեսակէտից :

Ես մէջէ մէջ առաջ կը բերեմ Վեսելովսկու կարծիքները հայերէն
թարգմանութեամբ , եւ մէջէ մէջ էլ կը տամ իմ դիտողութիւնները , աշ-
խատելով ցոյց ապա « Լեւոնի Վիշտը » նշանաւոր պոէմի բուն էական
իդէան բովանդակութեամբ միասին իր թերութիւններով եւ մանաւանջ
բարեմասն առաւելութիւններով բանաստեղծական հանգամանքների մէջ :

Շուրաւէր .

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍԱՆԵԱՆ

Հ Ա Յ Ա Ղ Ջ Ի Կ

Իմ աննման հայ աղջիկ ,
Դու հրեշտակի թայ աղջիկ .
Անուշ վարդ ես բաղիս մէջ ,
Նախշուն փերի տաղիս մէջ :

Բազըս բազ չէ տաանց քեզ ,
Տազըս տազ չէ տաանց քեզ .
Տազըս հին է ու երգւած ,
Իսկ իմ բազը նո՛ր ծաղկած . . .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

են Վեսելովսկու թարգմանած « Երազը » եւ Ումանէցի « Իտալուհիք եւ
Իտալացիք » . միւսները « Լեւոնի վիշտը » պոէմիցն են վերցրած :